

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԳԵՏԱՐԳԵԼ, ԲԱԼԱՀՈՎԻՏ, ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԵՎ ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
26.06.2015

Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանն աշխատանքային այցով եղել է մարզի Գետարգել, Բալահովիտ, Մայակովսկի և Նոր գյուղ համայնքներում:

Գետարգել համայնքում Կ. Գուլոյանը ծանոթացել է միջնակարգ դպրոցի շենքային պայմաններին, հանդիպում ունեցել կրթօջախում աշխատող մանկավարժների հետ:

Կոտայքի մարզպետը Բալահովիտ համայնքում եղել է տեղի միջնակարգ դպրոցում և մշակույթի տանը: Այստեղ մարզի ղեկավարին ներկայացվել են համայնքում կրթական և մշակութային գործընթացների կազմակերպման հիմնական ուղղությունները, ինչպես նաև տեղեկություններ են տրամադրվել համայնքի առօրյա կազմակերպման մանրամասների վերաբերյալ:

Կ. Գուլոյանը հանդիպում է ունեցել նաև Բալահովիտի միջնակարգ դպրոցի մանկավարժների հետ, վերջիններիս հետ համատեղ քննարկել կրթօջախի հիմնախնդիրներին վերաբերող մի շարք հարցեր: Մարզպետը եղել է նաև Մայակովսկի համայնքում, այցելել է միջնակարգ դպրոց, ծանոթացել կրթօջախի աշխատանքների ընթացքին, զրուցել ուսուցիչների հետ՝ պատասխանելով վերջիններիս կողմից բարձրացվող հարցերին:

Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոնում Կոտայքի մարզպետին ներկայացվել են առողջապահական հաստատության գործունեության և բնակիչներին մատուցվող բուժ.ծառայությունների ուղղությունները:

Այցելության վերջին կանգառը եղել է Նոր գյուղ համայնքը, որտեղ Կ. Գուլոյանը այցելել է միջնակարգ դպրոց, տեղում քննարկել կրթական գործընթացների արդյունավետությանը միտված մի շարք նկատառումներ:

Մարզի ղեկավարը եղել է նաև համայնքի բուժ.ամբուլատորիայում, զրուցել աշխատակիցների հետ, կարևորել բնակիչներին մատուցվող առողջապահական ծառայությունների պատշաճ կազմակերպման հանգամանքը: